ջապատում էին նրան եւ նրա վրայ խճի կտորներ էին նետում: Պառաւի հետ կար եւ մի փոքրիկ աղջիկ: Ես իսկոյն ճանաչեցի Հիւբբիին:

Կարծես երազ լինէր այդ, կամ տօթն ու յոգնածութիւնը այն աստիճան գրգռել էին իմ երեւակայութիւնը, որ իմ աչքի առջեւ երեւամ էին խաբուսիկ պատկերներ: Որտեղի՞ց յայտնոեցաւ Հիւբբին: Իսկ նրանից անբաժան պառաւը անպատճառ Սուսանը պէտք է լինէր: Այո՛, հէնց նա էր:

— Հիւբբի՛ն... Սուսանը՛... — բացականչեցի ես զարմացած կերպով եւ դարձայ դէպի Ասլանը:

— Նրանք են... — պատասխանեց նա մի այնպիսի ձայնով, որի մէջ լսւում էր ե՛ւ ուրախութիւն, ե՛ւ խորին մտատանջութիւն:

Երեւում էր, որ Ասլանին եւս ոչ սակաւ զարմացում պատճառեց նրանց անակնկալ յայտնոելը Այգեստանում: Դա առանց մի կարեւոր պատճառի չէր լինի:

Մենք շտապեցրինք մեր ձիաներին: Երեխաները, որոնց թւում կային եւ մի քանի հասակաւոր պատանիներ եւս, դեռ չէին դադարել նրանց չարչարելուց: Ես իսկոյն հասկացայ այդ ստահակների զոարճութեան նպատակը: Ես էլ նրանց նման շատ անգամ բոշայ կանանց ետեւից ընկած եմ եղել, երբ նրանք անց էին կենում մեր գիւղի միջով: Գաղտագողի կերպով մօտենում էի եւ կժմտում էի նրանց մարմնի միսը: Թէ՛ ես եւ թէ՛ իմ ընկերները հաւատացած էինք, որ բոշայ կնոջ մարմինը կախարդական զօրութիւն ունի, եւ եթէ նրա մարմինը մատներով կը ժմտենք, նոյն զօրութիւնը կը հաղորդի մեր ձեռքին, եւ մեր ձեռքը այնուհետեւ անխոցելի կը լինի ամէն տեսակ զէնքի առջեւ, որի հարուածները երբեք չեն ներգործի նրա վրայ, եւ նա միշտ յաջողակ կը լինի կռոի ժամանակ:

Մեր մօտենալը ամենեւին չզսպեց անպատկառ ստահակների յիմարութիւնները: Երբ մեզ տեսան նրանք, կարծես մի տեսակ խրախոյս ստացան եւ, հաւաքոելով միասին, փորձեցին խմբով յարձակում գործել: Այդ միջոցին տեղի ունեցաւ մի շատ սրտաշարժ տեսարան: Փոքրիկ Հիւբբին կանգ առեց, իր սպառնալից դէմքը դարձրեց դէպի խումբը եւ, ձեռքի թեթեւ գաւազանը բարձրացնելով, ասաց.

— Կանիծե՛մ, եւ դուք ամէնքդ քար կդառնաք...

Ես չկարողացայ առանց սոսկալու նայել նրա հրաբորբոք աչքերի բարկութեանը: Փոքրիկ կախարդի սպառնալիքը այն աստիճան ահարկու էր, որ թէեւ երեխաները քար չդարձան, բայց բոլորովին անշարժ մնացին. աղմուկը դադարեց, եւ մի քանի րոպէից յետոյ բոլորը ցրիւ եկան եւ հեռացան: